Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

9966

193 2г.

ЗКСМ
2-21

Պրոլյետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

329.154(47-41)
Կ-21

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

1 DEC 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ЗКСМ
2-21
ար.
24 SEP 2006
3

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

1001
33641

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

01 JUN 2013
9966

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7075 (բ)
Հրատար. 2027
Պատվեր 265
Տիրաժ 30000

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Հաստատված ՀամԼԿԵՄ IX Համամիութենական Համագումարի կողմից

## 1. ՀԱՄԼԿԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀամԼԿԵՄ հանդիսանում է Երիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի Սեկցիան, ընդունում է նրա ծրագիրն ու կանոնադրությունը, կատարում է նրա վորոշումները և ակտիվ կերպով մասնակցում է նրա ամբողջ գործունեությանն ու պայքարին։

ՀամԼԿԵՄ հանդիսանում է Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության ռեզերվը և ամենանվիրված օգնականը, աշխատում է նրա ղեկավարությամբ և ակտիվ կերպով մասնակցում է սոցիալիստական շինարարության։

2. Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է պարզ պատկերացնի ՀամԼԿԵՄ նպատակներն ու խնդիրները, գիտենա նրա ծրագիրն ու կանոնադրությունը,

ակտիվ կերպով մասնակցի Միության ամբողջ աշխատանքին և պայքարին:

3. Լենինյան կոմյերիտմիության անդամ,—դա բարձր կոչում է յուրաքանչյուր յերիտասարդ բանվորի և գյուղացու համար:

Կոմյերիտականն անշեղորեն կենսագործում է Լենինի այն պատգամը, թե՝ «յերիտասարդության կոմունիստական միությունը պետք է լինի հարվածային մի բրիգադ, վորն ամեն մի գործում ցույց է տալիս իր օգնությունը, յերևան է բերում իր ինիցիատիվը, իր նախաձեռնությունը:

Սոցիալիստական կառուցման բոլոր ճակատներում կոմյերիտականը պարտավոր է արժանի լինել իր մեծ ուսուցչի անվան: Նա պետք է. ամենայեռանդուն, ազնիվ, համարձակ և հեղափոխության անսահման նվիրված մարտիկը լինի՝ օրինակ հանդիսանալով ամբողջ յերիտասարդության և բոլոր աշխատավորների համար:

Կոմյերիտականը միշտ և ամեն որ աշխատում է Միության համար նոր անդամներ հավաքագրել:

4. Կոմյերիտականը պարտավոր է գիտենալ կուսակցության խնդիրները, վորոշումները և միշտ ու ամեն որ աշխատի դրանք իրագործել:

ՀամԼԿՅԵՄ լավագույն անդամներն ընդունվում են կուսակցության շարքերը: Յուրաքանչյուր կոմյերիտական իր ամբողջ գործունեյությամբ նախապատրաստում է իրեն համամիութենական կոմու-



նիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ անդամ մտնելու:

5. Կոմյերիտականը հավատարմորեն պայքարում է կուսակցության գլխավոր գծի համար, անհաշտ ու հետևողական կերպով մերկացնում է այդ գծից ամեն տեսակի շեղումները՝ ինչպես թեորիայում, նույնպես և պրակտիկայում՝ վճռական հակահարված տալով Լենինի ուսմունքի օպորտունիստական խեղաթյուրումներին:

Կոմյերիտականն անդուլ պայքարում է կուսակցության լենինյան միասնության համար, դաստիարակվում է նրա բոլշևիկյան տրադիցիայի վոգով, անողոք հակահարված է տալիս կոմյերիտմիությունը կուսակցությանը հակադրելու ամեն տեսակ փորձերին և այս հիման վրա իր ամենօրյա աշխատանքով ամրապնդում է ՀամԼԿՅԵՄ շարքերի միասնությունը:

6. Կոմյերիտականը պարտավոր է գիտենալ, վոր հեղափոխական թեորիան հզորագույն զենքն է հանդիսանում աշխատավորների ձեռքում: Նա տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, աշխատանքի մեջ վստահություն, հավատ դեպի մեր գործի հաղթանակը» (Ստալին):

Յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է սիստեմատիկաբար և տոկունությամբ ուսումնասիրել Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի ուսմունքը, անշեղորեն ղեկավարվելով Լենինի այն պատգա-

մով, վոր ասվել է Միությանը ՌԿԵՄ 3-րդ համագումարում.—«Կոմունիստական Երիտասարդության Միությունը միայն այն ժամանակ կարդարացնի իր այն կոչումը, վոր նա կոմունիստական երիտասարդ սերնդի Միություն է, երբ իր ուսման, դաստիարակության, կրթության յուրաքանչյուր քայլը կկապի այն պայքարին մասնակցելու հետ, վոր մղում են բոլոր աշխատավորները ընդդեմ շահագործողներին»:

7. Կոմերիտականը կուսակցության ամենամտերիմ օգնականն է ժողովրդատնտեսության սոցիալիստական վերակառուցման, ԽՍՀՄ ինդուստրիալացման համար մղվող պայքարում: Իր բոլոր ուժերն ու էներգիան նա տալիս է այս մեծագույն խնդրի իրագործմանը:

Անողոք պայքար մղելով դասակարգային թշնամու դեմ, անհաշտորեն յելնելով ընդդեմ հոսանքների, թերահավատների և ոչնչականների՝ կոմերիտականը հարվածային է հանդիսանում, աշխատանքի բոլշևիկյան տեմպերի և վորակի օրինակներ է ցույց տալիս, մոբիլիզացիա յե անում աշխատավորական լայն մասսաներին կուսակցության գլխավոր գիծն իրագործելու համար պայքար մղելու:

Յուրաքանչյուր կոմերիտական պարտավոր է անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներով զինվել, տիրապետել առաջավոր տեխնիկան և սիստեմատիկորեն աշխատել իր վորակավորումը բարձրացնելու վրա.



Վարձով աշխատող կոմերիտականը պարտավոր է պրոֆմիության անդամ լինել և ակտիվ մասնակցել նրա ամբողջ աշխատանքին:

8. Կոմերիտականը գյուղում՝ դա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կազմակերպիչն է: Նա պայքարում է դասակարգային թշնամու դեմ, վորը փորձում է վիժեցնել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, և կուսակցության ղեկավարությամբ աշխատում է իրագործել մեծագույն խնդիրը՝ կուլակությանը, վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացնելը:

Կոմերիտականը պարտավոր է կոլտնտեսության կազմակերպիչ և անդամ լինել և բոլշևիկյան աշխատանքի, կոլտնտեսության մեջ աշխատանքի սոցիալիստական կազմակերպման օրինակներ ցույց տալ՝ իր բոլոր ուժերն ու յեռանդը նվիրելով բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ ամրապնդելուն:

9. Սոցիալիստական շինարարության ճակատում հերոսական, անձնազոհ պայքար մղելու համար, կոմերիտմիությունը աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով է պարգևատրված: Յուրաքանչյուր կոմերիտական պարտավոր է պատվով կրել այն բարձր պարգևը և աշխատանքի ամենաբարձր տեմպերի յեվ նրա լավագույն վորակի համար ԽՍՀՄ ժողովրդատնտեսության սոցիալիստական վերակառուց-

ման բոլոր ճակատներում կռվող մարտիկների առաջավոր շարքերում գտնվել:

10. Կոմյերիտականը՝ կուլտուրական հեղափոխության ճակատում կուսակցության կողմից մղվող պայքարի ամենաակտիվ մասնակիցն է:

Նա միտն է պահում Լենինի պատգամն անգրագիտության վերացման մասին և անխոնջ աշխատում է ընդհանուր ուսուցման խնդիրների արագ իրագործման ուղղությամբ: Կոմյերիտականը պայքարում է դպրոցի պոլիտեխնիզացիան և այն իսկական սոցիալիստական դպրոց դարձնելն իրագործելու համար, ապահովելով, որ պրոլետարական միջավայրից առավելապես բարձր որակի մասնագետների նոր կադրեր պատրաստվեն:

Կոմյերիտականը կուլտուրական-մասսայական աշխատանքի չահատակը և կազմակերպողն է, ակտիվ ֆիզկուլտուրնիկ և նոր՝ կոմունիստական կենցաղի պրոպագանդիստ է:

11. Կոմյերիտականն ակտիվ մասնակցում է խորհուրդների աշխատանքին, ձգտում է ամրապնդել պրոլետարական դիկտատուրայի մարմինները և խորհրդային, պրոֆեսիոնալ, տնտեսական և կոոպերատիվ ապարատներն է՛լ ավելի մոտեցնել աշխատավոր մասսաներին:

Կոմյերիտականը վճռականապես պայքարում է բյուրոկրատիզմի, չինովնիկության և քաշքշուկի դեմ պե-



տապարատում, պետապարատի վրա ձեռնարկությունների շեֆական աշխատանքը բարելավելու միջոցով, բոլշևիկյան համարձակ ինքնաքննադատությունը ծավալելու միջոցով և մասնակցելու պետական ապարատի և խորհուրդների մեջ հարվածային բանվորներ և կոլտնտեսականներ առաջ քաշման աշխատանքին ամենաակտիվ կերպով մասնակցելու միջոցով:

12. Կոմյերիտականը պետք է պատրաստ լինի ամեն րոպե զենքը ձեռքին պաշտպանելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Նա պետք է ուսումնասիրի ռազմական գործը, պարտավոր է զինվորական դիսցիպլիններից մեկին տիրապետել, ամենաօրինակելի, դիսցիպլինար կարմիր բանակայինն ու կարմիր նավատորմայինը լինել, պատերազմի ժամանակ կռվել կրակի առաջավոր գծերում:

ՀամԼԿԵՍՄ-ը՝ Ծովային և Օդային Կարմիր Նավատորմի շեֆն է: Կոմյերիտականը պետք է օգնի ամրապնդել նրանց հզորությունը և սերտ կապ ըստեղծել աշխատավոր մասսաների հետ: Կոմյերիտականն ամեն կերպ ամրապնդում է ծովային և օդային նավատորմը, ուսումնասիրում է ավիացիան և ծովային գործն այն նպատակով, որ ապահովի ԽՍՀՄ ցամաքային, ծովային և օդային սահմանների լիակատար անմատչելիությունը:

ՀամԼԿԵՍՄ-ը պարգևատրված է Կարմիր դրոշի շքանշանով այն տաքուն աշխատանքի համար, որ

նա մղել է հասակավոր բանվորների հետ ձեռք-ձեռքի տված քաղաքացիական կռվի բոլոր ճակատներում կուսակցության ղեկավարությամբ։

Յուրաքանչյուր յերիտասարդ բանվոր, կոլտնտեսական և գյուղացի, վոր մտնում է կոմյերիտմիության մեջ, պետք է լավ միտը պահի ՀամԼԿՅԵՄ VIII համագումարի կոչն այն մասին, թե «Շքանշանը վո՛չ միայն պարգև է, շքանշանը մեծ պարտավորություն է», վոր Լենինյան Կոմյերիտմիությունն առնում է իր վրա մեր յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու գործում։

13· Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է հիշի, վոր պատանեկական կոմունիստական շարժումը պրոլետարական ընդհանուր շարժման անքակտելի բաղկացուցիչ մասն է, վոր պիոներները—ՀամԼԿՅԵՄ փոխարինողն են և կուսակցության ու կոմյերիտմիության անմիջական օգնականն են։

Յուրաքանչյուր կոմյերիտական օգնում է պիոներներին՝ մասնակցելու սոցիալիստական շինարարությանը, այդ գործին միացնելով պատանեկական բոլոր մասսաներին՝ պիոներներից մի այնպիսի սերունդ կռելով, վորն ընդունակ լինի պայքարել կոմունիստական հասարակության վերջնական կառուցման համար։

14· Բանվոր դասակարգն առայժմ հաղթանակել է աշխարհի մի վեցերորդ մասում։ Բանվոր դասակարգի և աշխատավորների պայքարը չի վերջանա-



մինչև վոր պրոլետարական հեղափոխությունը կապիտալիզմի ամբողջ աշխարհում չհաղթի։ Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է հիշի, վոր նա Լենինի դրոշակի տակ մտնելով, իր ամբողջ կյանքը տվել է հանուն կոմունիզմի մղվող պայքարին։ Նա պետք է պատրաստ լինի կուսակցության առաջին իսկ կոչին կանգնելու միջազգային պրոլետարական բանակի հեղափոխական մարտիկների առաջավոր շարքերում։

15· Յուրաքանչյուր կոմյերիտական յերիտասարդ պրոլետարների միջազգային բանակի՝ Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի մարտիկների անդամ է հանդիսանում, և կրում է ՅԵԿԻ КИМ) նշանը։

Կոմյերիտականը պայքարում է ամեն տեսակի շովինիզմի, ազգային ճնշման և ազգային խտրության դեմ, առաջներում հալածված ազգությունների արհամարհական վերաբերմունք ցույց տալու դեմ, օգնում է հետամնաց ազգությունների կուլտուր-տնտեսական և քաղաքական վերելքին, հիշելով, վոր կոմունիզմի ուղին անցնում է բոլոր յերկրների և ազգությունների աշխատավորների անքակտելի միության միջով։

## Ա. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՏԱՐՈՒՄԸ

16. ՀամԼԿՅԵՄ անդամ է համարվում 14-ից մինչև 23 տարեկան յուրաքանչյուրը, վոր ընդունում է Միության ծրագիրն ու կանոնադրությունը, աշխատում է նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում է ՀամԼԿՅԵՄ բոլոր վորոշումներին և մուծում է անդամավճարները։

Ծանոթ.—ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք դառնում են 23 տարեկան, կարող են մնալ կազմակերպության մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով։ Մեծահասակ կոմյերիտականը, վոր ընտրըվում է ՀամԼԿՅԵՄ ղեկավար մարմիններից մեկում, վճռական ձայնի իրավունք է ստանում։

17. ՀամԼԿՅԵՄ անդամ և թեկնածու ընդունելու հետևյալ կարգն է հաստատվում.—

Բանվորական, բատրակային, կոլտնտեսական, չքավորական և միջակ յերիտասարդությունը ՀամԼԿՅԵՄ անդամ է ընդունվում առանց թեկնածուական ստաժի և յերաշխավորության։

Ծանոթություն I.— ա) բանվորների, կոլտնտեսականների, բատրակների, չքավորների և միջակների, այլև կոոպերացված տնայնագործների մինչև 18 տարեկան զավակներն ընդունվում են ՀամԼԿՅԵՄ մեջ առանց թեկնածուական ստաժի և յերաշխավորության։



բ) Անմիջականորեն արդյունաբերության մեջ աշխատող այն մասնագետները, վորոնք պրոլետարական ընտանիքից են ծագում, գյուղական ուսուցիչներն ու գյուղատնտեսները, վորոնք բանվորների, բատրակների, չքավորների, կոլտնտեսականների ընտանիքից են ծագում, ՀամԼԿՅԵՄ անդամ են ընդունվում առանց թեկնածուական ստաժի և յերաշխավորության։

գ) ՀամԼԿՅԵՄ անդամության թեկնածուներ են ընդունվում ծառայողները, ինտելիգենտները և այլք։

դ) Թեկնածուների համար հաստատվում է մեկ և կես տարվա թեկնածուական ստաժ։

ե) Թեկնածու ընդունվելու համար պահանջվում է ՀամԼԿՅԵՄ 3 անդամների յերաշխավորություն, վորոնք ունեն յերեք տարվա ստաժ կամ ՀամԿ(բ)Կ յերկու անդամների յերաշխավորություն, վորոնք ունեն յերկու տարվա ստաժ։

Ծանոթություն II.— Թեկնածուները յենթարկվում են Միության բոլոր վորոշումներին, կրում են Միության անդամների բոլոր պարտականությունները, ժողովներում խորհրդակցական ձայնով են օգտվում, բայց չեն կարող ընտրել կամ ընտրվել Միության ղեկավար մարմիններում։

Ծանոթություն III.— Յերաշխավորողները յերաշխավորվողի վերաբերմամբ պատասխանատվություն են կրում՝ յերաշխավորության անհիմնության դեպքում միութենական տույժերի յեն-

թարկվելով՝ մինչև իսկ ՀամԼԿԵՍՄ շարքերից հեռացվելով։

ա) Երաշխավորության ստուգումը նախորդում է ընդունելությանը և կատարում է Միության կոմիտեն։

բ) ՀամԼԿԵՍՄ անդամ և թեկնածու ընդունելու հարցը քննվում է բջիջի ընդհանուր ժողովում և ընդունելության որոշումն իր ուժի մեջ է մտնում ՀամԼԿԵՍՄ ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, ԲՈՒՀ-ի, խորհտնտեսական կամ քաղաքային, ռայոնական կոմիտեյի կողմից հաստատվելուց հետո։

Ծանոթություն IV.— Թեկնածու ընդունելը և թեկնածուներին ՀամԼԿԵՍՄ անդամ փոխադրելը պարտադիր կերպով պիտի հաստատվի քաղաքային կամ ռայոնական կոմիտեյի կողմից։

ա) Կոմյերիտական ստաժը հաշվում է այն օրից, երբ բջիջի ընդհանուր ժողովը ՀամԼԿԵՍՄ անդամ ընդունելու կամ թեկնածուից ՀամԼԿԵՍՄ անդամ փոխադրելու որոշումն է կայացրել։

բ) ՀամԼԿԵՍՄ անդամներն ու թեկնածուները մի կազմակերպությունից մյուսը կարող են անցնել միայն այն կազմակերպության համաձայնությամբ, որտեղ նրանք հաշվառված են, և անցնելիս նոր կազմակերպություն, նրա կազմի մեջ են ընդունվում հաշվառումից հանելու նշումով անդամատոմս և անձնական քարտ ներկայացնելուց հետո միայն։



---

18. Միությունից վտարումը կարող է տեղի ունենալ ՀամԼԿԵՍՄ ծրագիրն ու կանոնադրությունը, դիսցիպլինան խախտելու և այնպիսի վարմունքի համար, որ անհամատեղելի են ՀամԼԿԵՍՄ անդամի կոչմանը։

19. Միությունից վտարումը կատարվում է ՀամԼԿԵՍՄ բջիջի ընդհանուր ժողովի որոշմամբ, հաստատվում է ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսության, ԲՈՒՀ-ի կամ քաղաքային, ռայոնական կոմիտեյի կողմից։ Վտարման որոշումը կարող է բողոքարկվել Միության՝ բարձրագույն մարմիններին ըստ ինստանցիաների, մինչև ՀամԼԿԵՍՄ ԿԿ։

20. ՀամԼԿԵՍՄ այն անդամը, որն առանց հարգելի պատճառների երեք անգամ չի հաճախել կազմակերպության իրար հաջորդող ընդհանուր ժողովներին, կամ երեք ամիս շարունակ չի մուծել անդամավճարը, մեքենայորեն դուրս է մնում ՀամԼԿԵՍՄ-ից և կարող է վերականգնել կազմակերպության անդամության իրավունքը միայն հատուկ որոշման միջոցով։

## III. ՀԱՄԼԿՅԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

21. ՀամԼԿՅԵՄ-ը կառուցվում է դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով՝ ըստ արտադրական-տերիտորյալ հատկանիշի։

Այն կազմակերպությունը, որն սպասարկում է մի ձեռնարկություն կամ ռայոն, վերադաս է համարվում այն բոլոր կազմակերպությունների վերաբերմամբ, որոնք սպասարկում են տվյալ ձեռնարկության կամ ռայոնի մի մասը։

22. Յուրաքանչյուր կազմակերպության մեջ բարձրագույն ղեկավար մարմին հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը։

23. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարները կոմիտե յեն ընտրում, որն հանդիսանում է նրանց գործադիր, հաշվետու մարմինը և ղեկավարում է ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպության ընթացիկ ամբողջ աշխատանքը։

24. ՀամԼԿՅԵՄ կառուցման սխեման հետևյալն է.

ա) ԽՍՀՄ տերիտորիան՝ Համամիութենական համագումարը — ԿԿ.

բ) Մարզերը, յերկրները, հանրապետությունները գումարում են մարզային, յերկրային կոնֆերենցիաներ, համագումարներ, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ համագումարներն ընտրում են մարզային կոմիտեներ, յերկրային կոմիտեներ և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ.



գ) Ռայոնները գումարում են ռայոնական կոնֆերենցիաներ, ընտրում են ռայոնական կոմիտեներ.

դ) Քաղաքները՝ քաղաքային կոնֆերենցիաներ — քաղաքային կոմիտեներ.

յե) Այն արդյունաբերական ձեռնարկությունները, ԲՏՈՒՀ-երը, ԲՈՒՀ-երը, որոնցում կան ՀամԼԿՅԵՄ 500-ից ո՛չ պակաս անդամ և թեկնածու, այն խորհտնտեսությունները, որոնցում կան 150-ից ո՛չ պակաս անդամ և թեկնածու՝ գումարում են ֆաբրիկ-գործարանային, ԲՈՒՀ-ական և խորհտնտեսական ՀամԼԿՅԵՄ կոնֆերենցիաներ — ընտրում են ֆաբրիկ-գործարանային, ԲՈՒՀ-ական, խորհտնտեսական ՀամԼԿՅԵՄ կոմիտեներ.

զ) Ձեռնարկությունները, ցեխերը, խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները, գյուղերը, հիմնարկությունները և ուսումնական հաստատությունները՝ գումարում են բջիջների ընդհանուր ժողովներ — ընտրում են բջիջների բյուրոներ։

25. Յենթարկման, հաշվետվության և միութենական որոշումների բողոքարկումների կարգը հետևյալն է.— բջիջի բյուրո, բջիջի ընդհանուր ժողով, ֆաբրիկ-գործարանային կոմիտե, ֆաբրիկ-գործարանային ռայոնական կոնֆերենցիաներ և այլն, ըստ ինստանցիաների մինչև ՀամԼԿՅԵՄ Համամիութենական համագումարը։

26. Յուրաքանչյուր կազմակերպություն, սկսած ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսական, ԲՈՒՀ-ի կոմիտեից, իրավունք ունի համապատասխան կնիք ձեռք բերել՝ մարզային (յերկրային) կոմիտեյի կամ ազգային հանրապետական ԿԿ սանկցիայով:

27. Ըստ առանձին կոնկրետ բնագավառների միութենական աշխատանք կատարելու համար կոմիտեները համապատասխան բաժիններ են ունենում սեկտորների ստորաբաժանմամբ: Բաժինների և սեկտորների կազմակերպման կարգը վորոշվում է ՀամԼԿՅԵՄ ԿԿ հատուկ հրահանգով:

28. Կոմյերիտական կազմակերպություններին կից ստեղծվում են պատանի պիոներների Լենինի անվան կոմունիստական կազմակերպություններ, վորոնք աշխատում են կոմյերիտմիության անմիջական ղեկավարությամբ: Պատանեկական կոմունիստական կազմակերպությունների աշխատանքի գործնական ղեկավարություն իրագործելու համար և պատանիների կոմունիստական դաստիարակության ամբողջ սիստեմի վրա կոմյերիտմիության ազդեցությունն ապահովելու համար՝ ՀամԼԿՅԵՄ կոմիտեներին կից ստեղծվում են ՊԿԿ (Պատանեկական Կոմունիստական Կազմակերպություն) (ДКО) հատուկ բյուրոներ, վորոնք աշխատում են կոմիտեյի անմիջական ղեկավարությամբ՝ բաժնի իրավունքներ վայելելով:



## IV. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29. ՀամԼԿՅԵՄ բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է Համամիութենական համագումարը, վոր հրավիրվում է Կենտրոնական Կոմիտեն, վո՛չ պակաս, քան յերկու տարին մեկ անգամ: Միության համագումարի հրավիրման և օրակարգի մասին հայտարարվում է վո՛չ ուշ, քան մեկ և կես ամիս համագումարից առաջ:

Կենտրոնական Կոմիտեն արտակարգ համագումարներ է հրավիրում իր նախաձեռնությամբ կամ տեղական կազմակերպությունների պահանջով, վորոնք պիտի ներկայացնեն վո՛չ պակաս, քան ՀամԼԿՅԵՄ անդամների այն ընդհանուր թվի մի յերրորդը, վոր ներկայացված եր Միության վերջին համագումարում: ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների պահանջով արտակարգ համագումարներ են հրավիրվում յերկու ամսվա ժամանակամիջոցում՝ հաշված հրավիրման պահանջի առաջադրման ժամանակից: Համագումարն օրինական է համարվում, յեթե դրանում ներկայացված են բոլոր անդամների այն թվի վո՛չ պակաս, քան կեսը, վոր ուներ Միությունը համագումարի հրավիրման ժամանակ:

30. Այն դեպքում, յերբ Կենտրոնական Կոմիտեն 29-րդ կետում մատնանշված ժամկետում արտակարգ

համագումար չի հրավիրում, ապա այն կազմակերպությունները, վորոնք պահանջել եյին այդ, իրավունք ունեն կազմակերպչական բյուրո կազմել, վորն օգտվում ե Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով՝ համագումար հրավիրելու համար:

31. Համագումարը լսում և հաստատում ե Կենտրոնական Կոմիտեյի և Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվությունները, վերանայում, փոփոխում ե Միության ծրագիրն ու կանոնադրությունը, նշում ե Միության ընդհանուր գիծը, խնդիրներն ընթացիկ հարցերի վերաբերմամբ, ընտրում ե Կենտրոնական Կոմիտե և Վերստուգիչ Հանձնաժողով:

32. Համամիութենական համագումարների միջև ընկած ժամանակամիջոցներում Միության գերագույն մարմինը Կենտրոնական Կոմիտեն ե հանդիսանում:

33. Կենտրոնական Կոմիտեն ընտրվում ե համագումարի վորոշած կազմով: Կենտրոնական Կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում, նրա կազմը լրացվում ե ԿԿ անդամության թեկնածուներից այն կարգով, ինչպես վորոշել ե համագումարը կամ նրա հանձնարարությամբ՝ ՀամԼԿՑԵՄ ԿԿ պլենումը:

34. Կենտրոնական Կոմիտեն ղեկավարում ե Միության ամբողջ աշխատանքը, ներկայացնում ե ՀամԼԿՑԵՄ-ը պետական հիմնարկություններում և կազմակերպություններում, նշանակում ե Միության կենտրոնական օրգանների խմբագրություններ, վո-



րոնք աշխատում են նրա հսկողության տակ, կազմակերպում և ղեկավարում ե հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկություններ, բաշխում ե Միության միջոցներն ու ուժերը: ԿԿ պլենումներ են հրավիրվում վո՛չ պակաս, քան յերեք ամիսը մեկ անգամ:

ԿԿ անդամության թեկնածուները ԿԿ պլենումի բոլոր նիստերին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով:

35. Պլենումների միջև ընկած ժամանակամիջոցներում Միության բոլոր գործերը ղեկավարելու համար պլենումն իր կազմի միջից ընտրում ե ԿԿ բյուրո և կազմակերպչական – գործադիր բնույթի ընթացիկ աշխատանքը կատարելու համար՝ քարտուղարություն, վորի կազմը վորոշում ե ԿԿ պլենումը:

36. Աշխատանքի հերթական հարցերը քննելու համար յերկու տարին մի անգամ, Միության Համամիութենական համագումարների միջև ընկած ժամանակամիջոցներում, Կենտրոնական Կոմիտեն Համամիութենական կոնֆերենցիա յե հրավիրում տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Կոնֆերենցիան խորհրդակցական բնույթ ե կրում, և նրա վորոշումները ԿԿ պլենումն ե հաստատում:

37. ԿԿ պարբերաբար ինֆորմացիա յե տալիս ան-

շրջան կազմակերպությունների էլ գործունեության մասին և լուսաբանում է այն մամուլում։

## V. ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

38. Կոմյերիտական կազմակերպությունները ՀամԼԿՅԵՄ ԿԿ թույլտվությամբ կարող են միանալ և մարզային, յերկրային միավորումներ կազմել։ Դրա պարտադիր պայմանը հանդիսանում է կուսկազմակերպությունների նման միավորման առկայությունը։

39. Ազգային հանրապետությունների և ինքնավար մարզերի միութենական այն կազմակերպությունները, վորոնք չեն մտնում յերկրային, մարզային միավորումների մեջ, իրավունքներով հավասարեցված են յերկրային, մարզային կազմակերպություններին, այսինքն՝ անմիջականորեն յենթարկված են ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին։

40. Մարզային, յերկրային հերթական կոնֆերենցիան կամ Կոմյերիտմիության համագումարը հրավիրվում է մարզային, յերկրային կոմիտեն։ Ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ տարեկան մի անգամ է հրավիրվում։ Արտակարգ կոնֆերենցիան կամ համագումարը հրավիրվում են մարզային, յերկրային կոմիտեների ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ վորոշմամբ կամ մարզի, յերկրի, հանրապետության մեջ մտնող ՀամԼԿՅԵՄ անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդի պահանջմամբ։ Մարզային, յերկրային կոնֆերենցիայի, ԼԿՅԵՄ ազգային հանրապետությունների համագումարի ներկայացուցչության նորման վորոշում է մարզային, յերկրային կոմիտեն և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ։ Մարզային, յերկրային կոնֆերենցիան և՝ ազգային հանրապետություններում՝ համագումարը լսում և հաստատում է մարզային, յերկրային կոմիտեների, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները, քննարկում է կոմյերիտական աշխատանքի հարցերը, ընտրում է մարզային, յերկրային կոմիտե, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ, վերստուգիչ հանձնաժողով և համամիութենական համագումարի համար պատգամավորներ։

**Ծանոթություն.**— Մարզային, յերկրային կոմիտեյի ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ և վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը վորոշվում է հետևյալ կազմակերպության կոնֆերենցիայի, համագումարի կողմից։

41. Մարզային, յերկրային կոմիտեն, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ ընթացիկ աշխատանքի համար բյուրո յեն ընտրում վո՛չ պակաս քան 7 անդամից և քարտուղարություն։ Մարզային, յերկրային կոմիտեների բյուրոն և ազգային հանրապե-

ությունների ԼԿՅԵՄ ԿԿ հաստատվում ե ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի կողմից։

Մարզային, յերկրային կոմիտեների, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ քարտուղարների համար պարտադիր ե կուսակցական և կոմյերիտական հետևյալ ստաժը.— բանվորների և գյուղացիների համար՝ ՀամԼԿՅԵՄ ստաժ — 4 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ — 3 տարի, ինտելիգենտների և ծառայողների համար — ՀամԼԿՅԵՄ ստաժ՝ 6 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ՝ 5 տարի։ Ստաժի մեծության վերաբերմամբ բացառություններ են թույլատրվում միայն ՀամԼԿՅԵՄ ԿԿ սանկցիայով։

42. Մարզային, յերկրային կոմիտեն, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ ԿԿ նշանակում ե կոմյերիտմիության օրգանների խմբագրություններ, վորոնք աշխատում են նրա հսկողությամբ, ղեկավարում ե ստորադաս կազմակերպությունների աշխատանքը, ներկայացուցիչ ե ունենում կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպություններում, կապ ե պահպանում խորհրդային կազմակերպությունների հետ, ինֆորմացիա յե տալիս մարզի, յերկրի, հանրապետության կազմակերպություններին իր գործունեյության մասին ինչպես մամուլում, նույնպես և կազմակերպությունների մեջ այդ մասին զեկուցումներ տալով։



Մարզային, յերկրային կոմիտեյի, ազգային հանրապետությունների՝ ԼԿՅԵՄ ԿԿ պլենումը գումարվում ե վո՛չ պակաս, քան յերկու ամիսը մեկ անգամ։

## VI. ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՔՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ

43. Կոմյերիտմիության հերթական մարզային կոնֆերենցիան հրավիրում ե Մարզային կոմիտեն վո՛չ պակաս, քան տարին մեկ անգամ, իսկ արտակարգ կոնֆերենցիաները հրավիրվում են մարզային կոմիտեյի վորոշմամբ կամ մարզի (հանրապետության) մեջ մտնող ՀամԼԿՅԵՄ անդամների ընդհանուր թվի մի յերրորդի պահանջմամբ։ Մարզային կոնֆերենցիան լսում և հաստատում ե Մարզային կոմիտեյի, Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվությունները, տվյալ մարզի, հանրապետության կոմյերիտմիության աշխատանքի հարցերն ե քննարկում, մարզային կոմիտե, Վերստուգիչ Հանձնաժողով և պատգամավորներ ե ընտրում ՀամԼԿՅԵՄ մարզային, յերկրային կոնֆերենցիաների, հանրապետական և համամիութենական համագումարների համար։

Ծանոթություն.— Մարզային կոմիտեյի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը վորոշվում ե մարզային կոնֆերենցիան։

44․ Մարզային կոմիտեն ղեկավարում է կոմյերիտմիության ստորադաս այն կազմակերպությունների գործունեությունը, վորոնք մտնում են ինքնավար մարզերի, հանրապետությունների մեջ, կոմյերիտական մարզային օրգանների խմբագրություններ է նշանակում, ներկայացուցիչ է ունենում կուսակցական, պրոֆմիութենական և խորհրդային մարզային կազմակերպություններում, ԿԿ և մարզային, յերկրային համապատասխան կոմիտեներին իր գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում։

Մարզային կոմիտեյի պլենումը գումարվում է վո՛չ պակաս, քան յերկու ամիսը մեկ անգամ։

45․ Մարզային կոմիտեն ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար ընտրում է մարզային կոմիտեյի բյուրո վո՛չ պակաս, քան 8 հոգուց։ Մարզային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է կուսակցական և կոմյերիտական հետևյալ ստաժը․—բանվորների և գյուղացիների համար — ՀամԼԿՅԵՄ ստաժ—3 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ — 1 տարի, ինտելիգենտների և ծառայողների համար — ՀամԼԿՅԵՄ ստաժ — 4 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ — 2 տարի։ Մարզկոմների և ազգային հանրապետությունների քարտուղարներին հաստատում են ՀամԼԿՅԵՄ մարզային, յերկրային համապատասխան կոմիտեները (միայն նրանց սանկցիայով է թույլատրվում ստաժի վերաբերմամբ բացառություններ անել)։



46․ Մարզային կոմիտեները կոնֆերենցիաների միջև ընկած ժամանակաշրջաններում սիստեմատիկորեն ինֆորմացիա յեն տալիս իրենց գործունեության մասին ստորադաս կազմակերպություններին, մարզերի ընդլայնած պլենումներ կամ մարզային խորհրդակցություններ են հրավիրում տվյալ կազմակերպության ռայոնների ներկայացուցիչներից։

47․ Ինքնավար ազգային այն հանրապետությունների և մարզերի կոմյերիտմիութենական կազմակերպությունները, վորոնք մտնում են մարզային, յերկրային, հանրապետական կազմակերպությունների կազմի մեջ, յենթարկվում են համապատասխան մարզային, յերկրային կոմիտեների և ազգային հանրապետությունների ԿԿ։

## VII․ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48․ ՀամԼԿՅԵՄ քաղաքային, ռայոնական կոնֆերենցիան հրավիրում է քաղաքային, ռայոնական կոմիտեն, վոչ պակա՛ս, քան տարեկան մեկ անգամ։ Արտակարգ կոնֆերենցիա հրավիրվում է քաղաքային և ռայոնական կոմիտեյի վորոշմամբ կամ կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդի պահանջմամբ։

Քաղաքային, ռայոնական կոնֆերենցիան լսում և հաստատում է քաղաքային, ռայոնական կոմիտեյի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները․

քննարկում է տվյալ քաղաքում, ռայոնում կոմյերիտական աշխատանքի հարցերը, ընտրում է քաղաքային, ռայոնական կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և պատգամավորներ մարզային, յերկրային կոնֆերենցիայի կամ ազգային հանրապետական կոմյերիտական համագումարի համար։

Ծանոթություն.— Քաղաքային, ռայոնական կոմիտեյի, վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը վորոշում է քաղաքային, ռայոնական կոնֆերենցիան։

49. Քաղաքային, ռայոնական կոմիտեն կազմակերպում և հաստատում է ֆաբրիկ-գործարանային կոմիտեները, կոլեկտիվները և ՀամԼԿՑԵՄ բջիջները, վարում է ՀամԼԿՑԵՄ բոլոր անդամների հաշվառումը, իր ռայոնի սահմաններում բաշխում է ուժերն ու միջոցները, ղեկավարում է ստորադաս կազմակերպությունների գործունեությունը, ներկայացուցչություն է ունենում կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ կազմակերպություններում։

Քաղաքային, ռայոնական կոմիտեն հաշվետու յե լինում իր քաղաքային, ռայոնական կոնֆերենցիային և ՀամԼԿՑԵՄ վերադաս կոմիտեներին։ Քաղաքային, ռայոնական կոմիտեների պլենումները գումարվում են վոչ պակաս, քան յերկու ամիսը մեկ անգամ։

50. Քաղաքային, ռայոնական կոմիտեն՝ կազմակերպության ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար



իր կազմից կոմիտեյի բյուրո յե ընտրում վոչ պակաս, քան 5 հոգուց բաղկացած։ Քաղկոմի, ռայկոմի քարտուղարը հաստատվում է մարզային, յերկրային կոմիտեյի, կամ ազգային հանրապետության կոմյերիտմիության ԿԿ կողմից։ Քաղկոմի, ռայկոմի քարտուղարի համար կուսակցական և կոմյերիտական հետևյալ ստաժն է վորոշվում. — բանվորների և գյուղացիների համար — ՀամԼԿՑԵՄ ստաժ — 2 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ — 1 տարի ինտելիգենտների և ծառայողների համար — ՀամԼԿՑԵՄ ստաժ 3 տարի, ՀամԿ(բ)Կ ստաժ 2 տարի։ Մարզկոմի, յերկրկոմի կամ ազգային հանրապետությունների ԼԿՑԵՄ ԿԿ սանկցիայով՝ միայն թույլատրվում է բացառություն անել ստաժի մեծության վերաբերմամբ։

Ծանոթություն. — Մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԼԿՑԵՄ ԿԿ թույլտվությամբ քաղաքային և ռայոնական խոշոր կազմակերպություններում կարող են քարտուղարություններ ստեղծվել 3 հոգուց բաղկացած։

51. Քաղաքային, ռայոնական կոմիտեները կոնֆերենցիաների միջև ընկած ժամանակաշրջաններում իրենց գործունեության մասին պարբերաբար ինֆորմացիա յեն տալիս ստորադաս կազմակերպություններին, ընդլայնված պլենումներ կամ քաղաքային, ռայոնական խորհրդակցություններ են գումարում ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսական կոմիտեների, կոլեկտիվների և տվյալ կազմակերպության բջիջների ներկայացուցիչներից։

52. Խոշոր քաղաքներում վերադաս կոմիտեի թույլտվությամբ և ՀամԼԿԵՄ ԿԿ հաստատմամբ կարող են քաղաքային կոմիտեին ենթակա ռայոնական կոմիտեներ ստեղծվել։

Մարզային, երկրային, հանրապետական խոշոր կենտրոններում, ՀամԼԿԵՄ ԿԿ հաստատմամբ, ստեղծվում են ռայոնական կազմակերպություններ, որոնք անմիջականորեն ենթարկվում են մարզային, երկրային կոմիտեին կամ ազգային հանրապետությունների ԼԿԵՄ ԿԿ։

## VIII. ՖԱԲՐԻԿ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ, ԽՈՐՀՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՏՈՒՀԵՐԻ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԽՈՇՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

53. Ֆաբրիկ-գործարանային տրանսպորտի այն ձեռնարկություններում, ԲՏՈՒՀ-երում և ԲՈՒՀ-երում, որոնցում հաշվում է 500-ից ավելի կոմերիտական, և այն խորհրդային տնտեսություններում, որոնցում հաշվում է 150-ից ավելի կոմերիտական, մարզային, երկրային կոմիտեի կամ ազգային հանրապետությունների ԿԿ թույլտվությամբ կարող են կոմերիտմիության կոմիտեներ կազմակերպվել, ցեխի բջիջներին կանոնադրական իրավունքներ վերապահելով։



Ծանոթություն. — ՀամԼԿԵՄ կոմիտեներ, որպես կանոն, կազմակերպվում են այնտեղ, ուր համապատասխան կուսկոմներ են ստեղծված։

54. Կոմերիտական կազմակերպության բարձրագույն մարմինը հանդիսանում է համագործարանային, տրանսպորտի, խորհտնտեսության, բուհի ՀամԼԿԵՄ կոնֆերենցիան, որը գումարվում է ոչ պակաս, քան 6 ամիսը մի անգամ։

55. Ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսության, բուհի կոնֆերենցիան լսում և հաստատում է կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները, իր կազմակերպության հերթական խնդիրներն է քննարկում, կոմերիտական կոմիտեն, վերստուգիչ հանձնաժողով և պատգամավորներ է ընտրում քաղաքային, ռայոնական կոմերիտական կոնֆերենցիաների համար։

Ծանոթություն.— Ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսության կոնֆերենցիայի ներկայացուցչության նորման որոշում է ՀամԼԿԵՄ կոմիտեն, կոմիտեների անդամների և թեկնածուների թիվը որոշում է կոնֆերենցիան։

56. Ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար կոմիտեի պլենումը կոմիտեի 3-ից 5 հոգուց բաղկացած բյուրո, և կոմիտեի պատասխանատու քարտուղար է ընտրում։

Կոմիտեի քարտուղարը պարտադիր կերպով պիտի ՀամԿ(բ)Կ անդամ լինի։

57. Փաբրիկ-գործարանային (տրանսպորտի), խորհտնտեսության, Բտուհի, Բուհի կոմիտեն ղեկավարում է ցեխային կոմյերիտական բջիջների աշխատանքը և ակտիվ մասնակցություն է ցույց տալիս ձեռնարկության, խորհտնտեսության և Բտուհի (Բուհի) հասարակական, պրոֆմիութենական և տնտեսական կազմակերպությունների աշխատանքին։

## IX. ՀԱՄԼԿՅԵՄ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

58. Յուրաքանչյուր կոլտնտեսության կից ՀամԼԿՅԵՄ բջիջ է կազմակերպվում։ Բջիջները կոմյերիտական խմբեր են ստեղծում ըստ արտադրական հատկանիշի (էկոնոմիաներին, բրիգադներին և խորհտնտեսության պատկանող ձեռնարկություններին կից)։ Այն գյուղերում, ուր կոլտնտեսություններ չկան, կազմակերպվում են ՀամԼԿՅԵՄ գյուղական բջիջներ, վորոնց առաջնակարգ խնդիրը հանդիսանում է բոլոր կոմյերիտականներին, այլև չքավոր-միջակ անհատական տնտեսություններին ըստ կարելույն արագ կերպով կոլտնտեսություն փոխադրել։

59. ՀամԼԿՅԵՄ ռայոնական կոմիտեյի վորոշմամբ և միութենական-վերադաս ինստանցիայի հաստատմամբ կարող են ընդհանուր կոլտնտեսական կոլեկտիվներ կազմակերպվել այն դեպքերում.

ա) յեթե գյուղի (ավանի) տերրիտորիայի վրա կա մի քանի ինքնուրույն կոլտնտեսական բջիջ.



բ) յեթե խոշոր կոլտնտեսության մեջ կա ավելի քան 50 կոմյերիտական կամ.

գ) յեթե գյուղի տերրիտորիայի վրա մի քանի ինքնուրույն բջիջներ կան՝ խորհրդային, կոոպերատիվ, յերկաթուղային, կոլյերիտ, 2-րդ աստիճանի դպրոցներին կից։

Այս բոլոր դեպքերում ընդհանուր կոլտնտեսական բջիջի կողմից միավորված բջիջներն աշխատում են ցեխայինների իրավունքներով։

60. Բոլոր ՄՏԿ կից ՀամԿԼՅԵՄ բջիջներ են ստեղծվում, վորոնք աշխատում են կանոնադրական բջիջների իրավունքներով և անմիջականորեն յենթարկվում են ՀամԼԿՅԵՄ ռայոնական կոմիտեյին։

## X. ՀԱՄԼԿՅԵՄ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. ՀամԼԿՅԵՄ կազմակերպության հիմքը բջիջն է հանդիսանում։ Բջիջը հաստատվում է քաղաքային, ռայոնական կամ Փաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսության կոմիտեյի կողմից, բջիջի կազմում պետք է լինի 3-ից վոչ պակաս ՀամԼԿՅԵՄ անդամներ։

62. Բջիջը կազմակերպվում է ձեռնարկության, հիմնարկության, կոլտնտեսության, խորհտնտեսության, գյուղին, ՄՏԿ դպրոցին կից։ Բջիջը մի այնպիսի կազմակերպություն է հանդիսանում, վորը կապում է բանվորագյուղացիական լայն մասսան-

մին ՀամԼԿԵՄ հետ։ Բջիջի հիմնական խնդիրները հանդիսանում են.

ա) Տվյալ ձեռնարկության, խորհտնտեսության, կոլտնտեսության, գյուղի, հիմնարկության, դպրոցի ՀամԼԿԵՄ անդամներին միացնել՝ անկուսակցական աշխատավոր երիտասարդության վրա ՀամԼԿԵՄ ազդեցությունն ուժեղացնելու և մասսաների մեջ կուսակցական և կոմյերիտական լոզունգներն ու վորոշումներն անցկացնելու համար։

բ՝ ՀամԼԿԵՄ մեջ նոր անդամներ ներգրավել և նրանց կոմունիստական դաստիարակություն տալ.

գ) Ձեռնարկության, խորհտնտեսության, ՄՏԿ, կոլտնտեսության, հիմնարկության և այլն տնտեսական-քաղաքական, արտադրական, կուլտուրական աշխատանքին ակտիվ կերպով մասնակցել.

դ) Բանվորական, բատրակային, չքավորական և կոլտնտեսական երիտասարդության տնտեսական և կրթական վիճակի բարելավման ուղղությամբ աշխատել.

ե) Կուսակցության, ՀամԼԿԵՄ, պրոֆմիութենական և խորհրդային ընտրության տարած կամպանիաներին մասնակցել.

զ) ՀամԼԿԵՄ անդամների և անկուսակցական երիտասարդության մեջ քաղաքական ուսուցում կազմակերպել։

63. Ձեռնարկություններում, խորհտնտեսություն-



ներում, կոլտնտեսություններում և ԲՏՈՒՀ-երում (Բուհերում) կոմյերիտական կազմակերպության կառուցվածքի հետևյալ սխեման է հաստատվում.—

1. Այնտեղ, ուր ստեղծված են կոմյերիտական կոմիտեներ՝

ա) Կոմյերիտական կոմիտե — ձեռնարկության, խորհտնտեսության, ԲՏՈՒՀ-ի (ԲՈՒՀ-ի) մեջ.

բ) Կանոնադրական ցեխային բջիջներ — ցեխերում, հերթափոխություններում, բաժիններում, ֆակուլտետներում, բաժանմունքներում և այլն.

գ) Կոմյերիտական խմբեր ընտրովի կազմակերպիչով՝ էլ ավելի ստորաբաժանումներով՝ ագրեգատներում, բրիգադներում, խմբակներում, սեմինարիաներում և այլն։

2. Այնտեղ, ուր կոմյերիտական կոմիտեներ չկան, ստեղծվում են.

ա) Կանոնադրական բջիջներ.

բ) Ցեխային բջիջներ և

գ) Կոմյերիտական խմբեր՝ ընտրովի կազմակերպիչով։

64. Ընթացիկ աշխատանքը վարելու համար բջիջը ընդհանուր ժողովին ընտրում է բջիջի բյուրո վոչ պակաս, քան 3 հոգի կազմով, 6 ամսով։

Ծանոթություն.— Այն բջիջում, վորը 7 հոգուց ավելի չէ, միայն բջիջի քարտուղար է ընտրվում։

65. ՀամԼԿԵՄ բջիջներն իրենց ներկայացուցիչներն են ունենում պրոֆմիությունների տեղական կոմիտեների, կոլտնտեսությունների վարչությունների, գյուղխորհուրդների և հասարակական այլ կազմակերպությունների հետ կապ պահպանելու համար։

66. Բջիջը պարբերաբար հաշիվ է տալիս իր ամբողջ աշխատանքի կամ դրա ճյուղերի մասին ֆաբրիկ-գործարանային, տրանսպորտի, խորհտնտեսական կոմիտեներին, քաղկոմներին, կամ ռայոնական կոմիտեներին։

## XI. ՀԱՄԼԿԵՄ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

67. Կոմյերիտական խմբերն աշխատանք են տանում յերիտասարդության մեջ, նրան ակտիվ մասնակցության են կոչում կուսակցության և կոմյերիտմիության բոլոր ձեռնարկումներին, և անմիջականորեն, այս խմբերի մեջ միավորված կոմյերիտականների միջոցով, իրագործում են սույն կանոնադրության 62-րդ կետում մատնանշված խնդիրները։

68. Խումբն իրավունք չունի նոր անդամներ ընդունել և կոնֆերենցիայի պատգամավորներ ընտրել։

69. Խմբի ընդհանուր ժողովն իր կազմից կազմակերպիչ է ընտրում, վորն իր աշխատանքի մասին հաշիվ է տալիս խմբին և իր բջիջին։



## XII. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

70. ՀամԼԿԵՄ կազմակերպության ամբողջ աշխատանքը Կարմիր Բանակում և Նավատորմում կատարվում է դրանց քաղմարմինների, ռազմական կոմիսարների և կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ, և կուսակցական-քաղաքական աշխատանքի անքակտելի մասն է կազմում։

Ծանոթություն.— ՀամԼԿԵՄ կոմիտեների և քաղմարմինների փոխադարձ հարաբերությունները վորոշվում են ՀամԼԿԵՄ ԿԿ և Հանրապետական Քաղաքական Վարչության (ПУР) հատուկ կանոնադրությամբ։

71. ՀամԼԿԵՄ հիմնական կազմակերպությունը Կարմիր Բանակի և Նավատորմի բոլոր մասերում, հիմնարկություններում և ուսումնական հիմնարկություններում հանդիսանում են ՀամԼԿԵՄ վաշտային, հեծելավաշտային, մարտկոցային, նավային և դրանց հավասարանիշ բջիջները, վորոնց կազմակերպում է զորամասի ռազմկոմը (քաղղեկը)։ Ստորաբաժանված յուրաքանչյուր բջիջի մեջ պետք է յերեք հոգուց պակաս ՀամԼԿԵՄ անդամ չլինի։

72. Վաշտային և դրանց հավասարանիշ կոմյերիտական բջիջները միավորվում և կազմում են ՀամԼԿԵՄ գնդի կամ դրանց հավասարանիշ կոլեկտիվներ։

73. Կարմիր Բանակի և Նավատորմի ՀամԼԿԵՄ բջիջների և կոլեկտիվների իրավունքները, պարտականությունները և աշխատանքը վորոշվում են հատուկ կանոնադրությամբ, վորն հաստատում է ՀամԼԿԵՄ ԿԿ և ԲԳԿԲ քաղաքական վարչությունը։

## XIII. ՀԱՄԼԿԵՄ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԿ(բ)Կ ՀԵՏ

74. Ամբողջ Միությունն ընդհանուր առմամբ կուսակցության կողմից անմիջականորեն ղեկավարվելու նպատակին հասնելու համար, ՀամԼԿԵՄ ԿԿ՝ Միության ղեկավար մարմինը հանդիսանալով և ՀամԼԿԵՄ համամիութենական համագումարներում ընտրվելով՝ անմիջականորեն յենթարկվում է ՀամԿ(բ)Կ ԿԿ։ ՀամԼԿԵՄ տեղական կազմակերպությունների աշխատանքը ղեկավարում և վերահսկում են մարզային, յերկրային, հանրապետական, քաղաքային, ռայոնական կուսկազմակերպությունները։

ՀամԼԿԵՄ մարմիններն իրենց ներկայացուցիչներն են ուղարկում ՀամԿ(բ)Կ համապատասխան մարմինները։



## XIV. ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

75. Աշխատանքի ընթացքում կապ պահպանելու և կոնտակտ հաստատելու համար, ՀամԼԿԵՄ կազմակերպությունները ներկայացուցիչներ են ունենում այն բոլոր պրոֆմիություններում, աշխատանքի պաշտպանության մարմիններում, ժողովրդական կրթության բաժիններում, տնտեսական կազմակերպություններում և հիմնարկություններում, վորոնց տարած աշխատանքը շոշափում է յերիտասարդության շահերը։

76. Կոմյերիտմիության ներկայացուցիչներ խորհրդային, պրոֆմիութենական, տնտեսական կազմակերպություններում կենսագործում են ՀամԼԿԵՄ Կոմիտեյի վորոշումները, հետևում են յերիտասարդության հարցի վերաբերմամբ օրենսդրությունների և կուսակցության վորոշումների կատարմանը, մասնակցում են համապատասխան կազմակերպությունների ընդհանուր աշխատանքում, պարբերաբար հաշիվ են տալիս իրենց աշխատանքի մասին ՀամԼԿԵՄ այն կազմակերպություններին, վորոնց կողմից ուղարկված են իրենք։

## XV. ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ

77. Խստագույն դիսցիպլինան Կոմյերիտմիության մեջ հանդիսանում է ՀամԼԿԵՄ բոլոր անդամների և

միութենական բոլոր կազմակերպությունների կարևորագույն պարտականությունը: Միութենական կենտրոնների վորոշումները պետք ե կատարվեն ճըշգրիտ և արագ կերպով: Դրա հետ միասին Միության ներսում միութենական կյանքի վիճելի բոլոր հարցերի քննարկումը միանգամայն ազատ ե, քանի դեռ դրանց վերաբերմամբ համապատասխան վորոշում չի ընդունված:

78. Վերադաս կազմակերպությունների վորոշումները չկատարելու և այլ նման արարմունքների դեպքում կազմակերպությունը կկշտամբվի, ժամանակավոր կոմիտե կնշանակվի վերևից և ընդհանուր վերագրանցում կկատարվի (կազմակերպության ցրում): Կոմյերիտմիության առանձին անդամները վերոհիշյալ արարքների դեպքում միութենական կշտամբանք կստանան, ժամանակավորապես կհեռացվեն Միության մեջ պատասխանատու աշխատանք կատարելուց, կվըտարվեն Միությունից:

Թեկնածու փոխադրել վորպես միութենական տույժի մի միջոց, չի թույլատրվում:

Ծանոթություն.— ՀամԼԿԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ ՀամԿ(բ)Կ անդամ և թեկնածու յեն, Միության կանոնադրությունը կամ ծրագիրը խախտելու դեպքում, պատասխանատվություն են կրում վո՛չ միայն միութենական, այլ և կուսակցական կարգով:



## XVI. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

79. Վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են համագումարներում (կոնֆերենցիաներում) վո՛չ պակաս քան յերեք հոգուց բաղկացած կազմով— ՀամԼԿԵՄ ստաժով —վո՛չ պակաս, քան յերեք տարի և կուսակցական ստաժով —վո՛չ պակաս, քան մեկ տարի:

Ծանոթություն.— Վերստուգիչ հանձնաժողովներ են ստեղծվում միայն այն կազմակերպություններում, ուր կան ՀամԼԿԵՄ կոմիտեներ:

80. Վերստուգիչ հանձնաժողովները սիստեմատիկաբար ստուգում են Միության մարմիններում գործերի ընթացքի և կատարման արագությունն ու ճշտությունը և կոմիտեների հետ միասին ձեռնարկումներ են մշակում ապարատի աշխատանքը բարելավելու համար:

## XVII. ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

81. Կոնֆլիկտային հանձնաժողովներն ընտրվում են կոմիտեների պլենումներում, պլենումի վորոշած կազմով: Հանձնաժողովի անդամները պարտադիր կերպով պիտի կոմյերիտական, ՀամԿ (բ) Կ անդամ լինեն—ՀամԼԿԵՄ ստաժով—վո՛չ պակաս, քան յերեք տարի կուսստաժով—վո՛չ պակաս, քան յերեք տարի և կուսստաժով վո՛չ— պակաս մեկ տարուց:

82. Կոնֆլիկտային հանձնաժողովները պայքար են մղում Միության շարքերի դասակարգային մարտունակությունն ամրապնդելու, դրանք ամեն տեսակ սոցիալապես խորթ, կազմալուծված և խցկված տարրերից մաքրելու համար քննում են այն բոլոր կոնֆլիկտային գործերը, վոր ստացվում են ՀամԼԿՅԵՄ անդամներից:

Կոնֆլիկտային հանձնաժողովների վորոշումներն ուժի մեջ են մտնում կոմիտեյի կողմից հաստատվելուց հետո:

Ծանոթություն.— Կոնֆլիկտային հանձնաժողովների սխեմը և կոնֆլիկտային գործերի անցումն ըստ ինստանցիաների վորոշում է ՀամԼԿՅԵՄ ԿԿ հատուկ կանոնադրությամբ:

## XVIII ՄԻՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

83. Դրամական միջոցները կազմում են անդամավճարներից, մասհանումներից, օժանդակություններից և այլ մուտքերից:

84. Անդամավճարն ու մուտքի վճարը ՀամԼԿՅԵՄ անդամների և թեկնածուների համար պարտադիր է հանդիսանում: Անդամավճարների և մուտքի վճարների չափը վորոշվում է ԿԿ հատուկ հրահանգով:

Ծանոթություն.— Անդամավճար մուծելուց բոլորովին ազատվում են գործազուրկները և սոցիալական ապահովության հաշվին ապրողները, վորի մասին նշում է արվում անդամատոմսի մեջ:



85. ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ նաև ՀամԿ(բ)Կ անդամ կամ թեկնածու են, ազատվում են Միության անդամավճար տալուց:

86. ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ և թեկնածու ամեն տարի Յերիտասարդական Միջազգային Օրը ( МЮД ) կամ Կ. Լիբկնեխտի օրը մուծում է 10 կոպեկ յերիտասարդության յեղբայրական այն կազմակերպությունների օգնության ֆոնդին (ինտերնացիոնալ մուծում), վորոնք գտնվում են բուրժուական-կապիտալիստական յերկրներում:

87. ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ և թեկնածու տարեկան 20 կոպեկ վճարում է Կոմյերիտմիության ծովային և օդային նավատորմի շեֆության ֆոնդին:

Ծանոթություն.—ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք միաժամանակ ՀամԿ(բ)Կ անդամ կամ թեկնածու են, ինտերնացիոնալ մուծման և շեֆական մուծման վճարումից չեն ազատվում:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (1 Մ)

**УСТАВ ВЛКСМ-а**

Госиздат ССР Армении
Эривань—1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0182772